## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ-ն, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, 033, Բաղրամյան 75/44 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՋՏԾ-ԲԸՀԱՇՁԲ-03/14ՌՀՀ ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մայիսի 8-ին, ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՋՏԾ-ԲԸՀԱՇՁԲ-03/14-3ՌՀՀ ծածկագրով կնքված պայմանագրում 2014թ-ի հուլիսի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՋՏԾ-ԲԸՀԱՇՁԲ-03/14-3ՌՀՀ ծածկագրով պայմանագիրը կնքվել է ընդհանուր գումարով և բաղկացած է 2014թ-ին կատարվելիք և ընդհանուր կատարվելիք աշխատանքից: Ընդհանուր կատարվելիք աշխատանքը՝ համաձայն պայմանագրի 8.6 կետի կկատարվի պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում աշխատանքի մնացած մասի կատարման համար ֆինանսական միջոցները նախատեսվելու դեպքում: 2014թ-ին ՀՀ Կառավարության 2014 թվականի 26 հունիսի N 695-Ն որոշումով պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների մնացած մասի կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, ինչը հանդիսացել է պայմանագրի փոփոխության պատճառ:

Փոփոխության նկարագրություն: Համաձայն ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՋՏԾ-ԲԸՀԱՇՁԲ-03/14-3ՌՀՀ ծածկագրով պայմանագրի 8.6 կետի պայմանագրով նախատեսված աշխատանքների մնացած մասի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագիրը՝ նախատեսված աշխատանքների մնացած մասով, ուժի մեջ է մտնում լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Քանի որ, 2014թ-ին ՀՀ Կառավարության 2014 թվականի 26 հունիսի N 695-Ն որոշումով պայմանագրով նախատեսված աշխատանքների մնացած մասի կատարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ՝ պայմանագրի կողմերի միջև 2014թ-ի հուլիսի 21-ին կնքվել է պայմանագրով նախատեսված աշխատանքների մնացած մասի կատարման լրացուցիչ համաձայնագիր, որում ամրագրվել են բոլոր փոփոխությունները:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ Կառավարության 2014 թվականի 26 հունիսի N 695-Ն որոշումը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գուրգեն Մացոյանին:

Հեռախոս՝ 010 266058:
Էլ. փոստ՝ gmatsoyan@wsdp.am:
Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Ջրային տնտեսության ԾԻԳ» ՊՀ